

**ՃԱՊՈՆԱԿԱՆ ՄՈՂԵՌՆԻԶՄԻ¹ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ «ԵՐԵՒԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻ»
ՔՆՆԱՐԿՈՒՄԸ 1990-ԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ**

ԳԻՇՅԱՆ Ժ. Բ.

1997 թ. ամռանը «վայրի երեխայի» մասին պատկերացումների հզոր մի ալիք թափանցեց ճապոնական թերթեր ու հասարակական գիտակցություն: Այդ հոսանքի մեջ ակնհայտ էր տասնչորսամյա մի երեխայի՝ Սակակիբարա Մեիտոյի ազդեցությունը, որին հայտնաբերեցին 1997 թ. հունիսին. նա բարբարոսաբար սպանել էր տարրական դասարանների մի քանի աշակերտների Կոբեում: «Երեխան վտանգավոր է, նրանից պետք է զգուշանալ», «Երեխան անճանաչելի ու ահագորու է», «Ինչպես կարելի է տեսնել մեր երեխաների հոգու մուլթ անկյունները». սրանք էին այն հոդվածների միտվածությունը, որ հայտնվեցին ճապոնական մասնագիտական հրատարակություններում, տպագիր ու էլեկտրոնային մամուլում:

1997 թ. Կոբեի սպանություններից հետո ճապոնիայում ձևավորվեց «երեխայի» ու Ծագող արևի երկրի զարգացման նոր քննություն: Ճապոնական «Աերա» ամսագրի 1997 թ. նոյեմբերի հատուկ համարը Կոբեի սպանությունները որակում էր որպես «երեխայի» «հրեշայնացման» (դեմոնացման) և «երեխայի» շուրջ քննախոսության սկզբնավորման պահ²: Հասարակության մեջ խոր անհանգստության պատճառ էր, որ դաժան, զազրելի ու վանող սպանությունների հեղինակն ընդամենը տասնչորս տարեկան էր: Քննարկումը հիմնվում էր վստահության ու ապահովության ճգնաժամի, այն գաղափարի վրա, որ «սուներ, ընտանիքը, դպրոցն ու հասարակությունը խորտակման եզրին են»:

1990-ականների վերջերի այս վերլուծությունները ներառվեցին «կորուսյալ տասնամյակի»³ ճգնաժամի ու սոցիալական քայքայման ավելի լայն ուսումնասիրությունների մեջ: Այս խոր ու ինտենսիվ մասնագիտական վերլուծությունները (քննարկումն ուղեկցվում էր խոր մասնագիտական քննարկումներով) հիմնվում էին արևմտյան և ճապոնական տե-

¹ Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման (մոդեռնացման) տեսությունը ելնում էր ավանդական ճապոնական մշակույթի ու տնտեսական զարգացման անհակասականության դրույթից: Սակայն սկսած 1990 թ.՝ տարածում են ստանում ավանդական մշակույթի անկման և, մի կողմից՝ «մշակութային», իսկ մյուս կողմից՝ «տնտեսական-քաղաքական» ոլորտների օտարման տեսությունները: Վերջիններս էլ հենց նշանավորում են մոդեռնիզմի ճգնաժամը և հետմոդեռնիզմի դարաշրջանի սկիզբը Ճապոնիայում:

² Տե՛ս **Andrea G. Arai**, *The “Wild Child” of 1990s Japan*, *The South Atlantic Quarterly*, N 99 (4), Duke University Press, 2000, էջ 860, ծանոթագրություն 22:

³ 1990-2000 թվականները, նկատի առնելով այդ տարիների տնտեսական անկումն ու ճգնաժամը, հայտնի են որպես «կորուսյալ տասնամյակ»: «Կորուսյալ տասնամյակի» քննությանն է նվիրված «Սոցիալական գիտությունները Ճապոնիայում» տեղեկատվական ամսագրի 2005 թ. մարտի հատուկ համարը (տե՛ս *“1990s” Japan: The Lost Decade*, *Social Science Japan: Newsletter of the Institute of Social Science, University of Tokyo*, N 31, March, 2005):

սությունների վրա: Քննարկման ձևավորման համար կարևոր էին Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման (մոդեռնացման) տեսությունը⁴ և Ճապոնիայի մշակութային ինքնությունն ուսումնասիրող Ֆրանց Բոասի (1858-1942) ու նրա աշակերտների ամերիկյան դպրոցը: Վերջինս մեծ դեր էր խաղացել հետպատերազմյան դարաշրջանում «Ճապոնական ինքնության գաղափարախոսությունների» (Nihonjinron) ձևավորման մեջ, որոնց լավագույն ձեռքբերումներից են Տակեո Դոիի⁵ 1970-ական թվականների աշխատանքները:

Արդի հեղինակները՝ Ճապոնացի թե արևմտյան, անդրադառնում են յուրօրինակ Ճապոնական ինքնության այս տեսությունների ծագմանն ու զարգացմանը, Դոիին և այլ հայտնի դեմքերի, օրինակ՝ Կավայի Հայաոյին⁶, և վերլուծում, թե «երեխան» ինչպես է օգտագործվել Ճապոնիայի զարգացումը մեկնաբանելու համար⁷: Ուսումնասիրելով «վայրի երեխայի» մասին 1990-ական թվականների պատկերացումները՝ նրանք ընդգրծում են, որ քննում են «երեխայի» և արդի Ճապոնիայի սոցիալական քայքայման և Ճապոնական մշակույթի ու պատմության փոխհարաբերությունը: Իսկ ավելի լայն իմաստով՝ «երեխայի» օգնությամբ քննարկվում են Ճապոնական ազգային պետության ու հասարակության հեռանկարները:

Քննարկումների մասնակիցները 1997 թ. Կորեի սպանությունները համեմատում են 1995 թ. Կորեի երկրաշարժի⁸ և «Աում Սինրիկյո»⁹ ա-

⁴ XX դ. երկրորդ կեսին ընդհանուր տարածում ունեցող Ճապոնիայի «տնտեսական զարգացման» և «յուրահատուկ Ճապոնական մշակույթի» կապի տեսությունը, ըստ որի՝ Ճապոնիայի տնտեսական զերտերություն դառնալը համարվում էր «յուրօրինակ Ճապոնական մշակույթի» արդյունք: Ըստ այդմ՝ Ճապոնիայի հետպատերազմյան արդիականացման տեսությունը հայտնի է որպես «մշակութայնացման» (“culturalism”) տեսություն:

⁵ Տակեո Դոիի՝ ծնվ. է 1920 թ. Տոկիոյում: Ականավոր Ճապոնացի հոգեվերլուծող: Լայնորեն հայտնի է «Կախվածության կազմախոսությունը» (1971) աշխատության մեջ արդի Ճապոնական հասարակության իր նշանավոր վերլուծությամբ: Աշխատությունը կենտրոնանում է Ճապոնացիների մշակութային վարքի պատճառների բացահայտման վրա: Պ. Դեյլը «Ճապոնացիների բացառիկության միֆը» աշխատության մեջ քննադատում է Դոիի տեսությունը և այն համարում «Ճապոնական ինքնության գաղափարախոսությունների» դրսևորումներից մեկը (տե՛ս **Peter N. Dale, The Myth of Japanese Uniqueness, Oxford, London, Nissan Institute, 1986**, էջ 116-175):

⁶ Կավայի Հայաո՝ ծնվ. է 1932 թ. Տոկիոյում: Հայտնի է Ճապոնական առասպելների, կրոնական համակարգերի և Ճապոնական ու ամերիկյան մտքի իր համեմատական ուսումնասիրություններով:

⁷ Մեյձի դարաշրջանում (1868-1912) երեխայի դաստիարակության ազգային քննության մասին տե՛ս **Tanaka S., Childhood: Naturalization of Development into a Japanese Space, in: Cultures of Scholarship (ed. Sally Humphreys), Ann Arbor, 1997**:

⁸ Ճապոնիայում տեղի ունեցած ամենավերիչ երկրաշարժերից մեկը: Այն խլեց 5.500 մարդկային կյանք, իսկ վիրավորների թիվը հասնում էր 26.000-ի:

⁹ «Աում Սինրիկյո» («Ճշմարտության կրոն») 1984 թ. հիմնված նոր կրոնական ուղղություն է: 1995 թ. Տոկիոյի ստորգետնյա տրանսպորտային հանգույցում իր նախաձեռնած թունավորումից և դրան հաջորդած դատավարություններից հետո այս աղանդը փոխեց իր անունն ու էմբլեմը: 1995 թ. «Աում Սինրիկյո» ուներ 9,000 անդամ Ճապոնիայում և շուրջ 40,000 անդամ աշխարհի տարբեր երկրներում: Ներկայումս այն ունի մոտ 2,000 անդամ:

ղանդի կողմից Տոկիոյի ստորգետնյա տրանսպորտային հանգույցում ձեռնարկված թունավորման հետ: Կենտրոնական Սակակիբարա Սեիտոյի ծնողների հիշողություններն ամփոփող գրքի վրա՝ նրանք հետևում են ծնողների կողմից իրենց երեխայի ոչերեխայական վարքի մոտիվների որոնմանը: Բոլորը ջանում են հասկանալ զագրելի սպանությունների հեղինակի և Ճապոնիայի սոցիալական իրականության և մշակութային-պատմական ոլորտի կապը:

1990-ականների վերջի հասարակական այս անհանգստությունն արդի Ճապոնական ու արևմտյան ուսումնասիրությունների կենտրոնում է: Ժամանակակից Ճապոնիայում ու անգլո-ամերիկյան ճապոնագիտական կենտրոններում¹⁰ այս քննարկումների նշանակությունը կարևորվում է, քանի որ դրանք բացահայտում են ժամանակակից Ճապոնիայի բարոյական ու մշակութային ճգնաժամի աղբյուրները, ինչպես նաև XXI-րդ դարասկզբի Ճապոնական հասարակության տագնապները:

1997 թ. հուլիսին Միաձակի Հայաոյի¹¹ կողմից մտահոգացված և իրականացված մի անիմացիոն կինոժապավեն սկսեց ցուցադրվել Ճապոնիայում ու գերազանցեց բոլոր սպասելիքները: Իր էկրան բարձրանալուց հինգ ամիս անց «Իշխանուհի Մոնոնոկե» դիտեց Ճապոնիայի ամբողջ ազգաբնակչության մեկ տասներորդը: Այս պատմությունն արտահայտում էր Միաձակիի մտահոգությունները՝ կապված դարավերջի Ճապոնիայի սոցիալական հիվանդությունների հետ: «Մենք կարող ենք պարզորոշ տեսնել XXI դ. արը և զարմանալ, թե ինչպես մենք ինքներս կարող ենք ապրել այդ քաոսում,- ասում էր Միաձակին¹²: Իշխանուհի Մոնոնոկեի մեջ,- գրում է Ա. Գ. Արայը,- Միաձակին անդրադարձ է կատարում Ճապոնիայի արդի զարգացումներին ու այն կորուստներին, որ մոդեռնությունն է բերում իր հետ: Անհանգստացած սոցիալական իրավիճակի փոփոխության հնարավորությամբ, որը կարող է անդրադառնալ սոցիալական ու մշակութային վերարտադրության և երիտասարդության վրա ու այլևս չտանել հիշողության մեջ ընդհանուր անցյալի վերարտադրությանը, ինչպես որ նրա նախկին պատմություններն էին ասում, Միաձակին այս ֆիլմում առաջ է գնում ու ջանում նորից միավորել բնության ու մշակույթի ոլորտները՝ պատմության միջնորդությամբ: Այն միջոցը, որը նա ընտրում է դրան հասնելու համար, վայրի երեխայի կերպ արն է¹³:

Ֆիլմը սկսվում է մառախուղի մեջ խրված սարերի վրա տարածվող թմբուկների ձայներով, որոնք հասնում են մինչև լոին անտառների հեռա-

¹⁰ 1990-ականների Ճապոնիայի ուսումնասիրություններով հայտնի են Տոկիոյի համալսարանի սոցիալական գիտությունների ինստիտուտը, ամերիկյան Այովայի, Դյուկի, Կոլումբիայի, Կորնելի, Միչիգանի, Նյու Յորքի համալսարաններն ու համալսարանական կենտրոնները:

¹¹ Միաձակի Հայաո՝ ծնվ. է 1941 թ. Տոկիոյում: Ճապոնացի նշանավոր բեմադրիչ: Ըստ 2006 թ. «Թայմ» ամսագրի հարցման՝ ճանաչվել է Հարավային ու Արևելյան Ասիայի վերջին 60 տարվա ամենաազդեցիկ դերերից մեկը (տե՛ս **Morrison T.**, *Hayao Miyazaki: In an Era of High-tech Wizardry, the Animé Auteur Makes Magic the Old Way*, Time Asia, November 13, 2006):

¹² **McCarthy H.**, *Hayao Miyazaki, Master of Japanese Animation*, Berkeley, 1999, p. 184-185.

¹³ **Andrea G. Arai**, նշվ. աշխ., էջ 843:

վոր խորին անկյունները, ու մի ձայն ասում է. «Շա՛տ-շա՛տ ժամանակներ առաջ այս երկրում...»: Անեծքից ազատվելու որոնումներում գլխավոր հերոսը՝ Ասիտական, տեսնում է մի պայքար կենդանիների աշխարհի ու մարդկանց միջև, իսկ կենդանիներին առաջնորդում է ո՛չ ամբողջովին կենդանու, ո՛չ ամբողջովին մարդու կերպարանքով մի էակ: Նրա կերպարը և՛ անհարիր է քաղաքակրթությանը, և՛ նաև գրավիչ: Սա մեր առաջին ծանոթությունն է Սանի հետ, որը անտառի ու կենդանիների ծնունդ է և նաև պատկանում է այդ աշխարհին:

Ո՞րն է այս «վայրի երեխայի» հանդեպ ձգտման պատճառը, և ի՞նչ առանձնահատուկ գաղափարական բովանդակություն ու իմաստ է մատնանշում Միաձակին՝ նրան զետեղելով հնօրյա Ճապոնիայի երևակայական պատկերի մեջ:

XIX դարի սկզբին Արևմտյան Եվրոպայում ծագեց վայրի բնության մեջ ու կենդանական աշխարհում ապրող երեխայի գաղափարը, որը կարող էր գիտելիքներ տալ մարդկային պարզունակ պատմության, բնածին ունակությունների ու «երեխայի» զարգացման մեջ բնության կարևորության մասին¹⁴: 1893 թ. Ռ. Կիպլինգը սկսեց գրել Մաուգլիի մասին պատմությունների շարքը, որոնք ավելի ու ավելի կարևորվեցին հետագայում՝ ժամանակակից թվային ու համակարգչային տեխնոլոգիաներով հագեցած մանկության գաղափարի ձևավորման հետ: XIX դարի առաջին կեսին հայտնի դարձավ Վիկտորը կամ «Ավելյոնի վայրի երեխան», որը թափառում էր հարավային Ֆրանսիայի գյուղական վայրերում՝ Ավելյոն գավառական կենտրոնից ոչ հեռու: Նրան հայտնաբերել էր կոնստեբլը, որը, ի տարբերություն գյուղացիների, որոնք կերակրում ու ապաստան էին տալիս տղային, նրան արժեքավոր համարեց գիտական ուսումնասիրության տեսակետից:

Վայրի բնության մեջ ու կենդանական աշխարհում մեծացող երեխայի այս կերպարը կապելով հնօրյա Ճապոնիայի հետ՝ Միաձակին փնտրում է արդի Ճապոնիայի զարգացման անցանկալի հետևանքները (օրինակ՝ կապիտալիստական արդիականացման սոցիալական ֆրագմենտացիան): Սանը, որը ծագում է վայրի բնությունից, նրան ընձեռում է այս հնարավորությունը: Նրա «վայրի բնության մեջ գտնվելը», հետևաբար նաև Սանի «օտարումը մշակույթից», հանգեցնում է նրան, որ նա ներառում է «կյանքն իր նախասկզբնական ձևի մեջ», որը կարող է «հաղթահարել անկում ապրող ու քայքայվող մշակույթը»¹⁵: Սանն արժեքավոր է Ճապոնիայի նոր զարգացման համար: Ճիշտ այնպես, ինչպես որ Սանը կորոպով լի անմեղություն ու միամտություն է ճապոնական հետմոդեռնիզմի դժվարին ժամանակներում, Սակակիբարա Սեիտոյի ոչ երեխայական արարքը սրութ-

¹⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս **Harlan Lane V.**, *The Wild Boy of Aveyron*, Cambridge, MA, 1996. **Shattuck R.**, *The Forbidden Experiment: The Story of the Wild Boy of Aveyron*, New York, 1980: Քաղաքային աղքատ երեխաների մանկության ու դաստիարակության մասին տե՛ս **Cunningham H.**, *The Children of the Poor: Representation of Childhood since the Seventeenth Century*, Cambridge, MA, 1991:

¹⁵ Տե՛ս **Rose J.**, *The Case of Peter Pan or the Impossibility of Children's Fiction*, Philadelphia, 1993, էջ 43:

յամբ բացահայտում է ժամանակակից ճաճանչուն ու մեծ ներուժի տեր մանկության տարօրինակորեն վանող ու մշակույթը քայքայող բովանդակությունը: Ինչպես նշում է Ա. Գ. Արայը, հենց տարբերության այս զգացումով մենք պետք է առաջնորդվենք, եթե ցանկանում ենք հասկանալ, թե ինչ է ընկած արդի մանկության ճաճանչափայլության ու վանողականության հետևում, և այն, թե ինչու Սակակիբարա Սեիտոյի մանկությանն անհարիր գործողությունը դարձավ մտասնեման օբյեկտ¹⁶:

1999 թ. ապրիլին Սակակիբարա Սեիտոյի ձեռքակալությունից երկու տարի անց, նրա ծնողները հրապարակեցին իրենց հիշողությունները: Դրանք լույս տեսան «Սակակիբարա Սեիտո. ես եմ աշխարհի բերել այս երեխային, հոր և մոր զոջումի հուշագրություն» վերնագրով: Այս գիրքը ներողամտության խնդրանք ու աղերսանք է ուղղված ճապոնացիներին: Հուշագրությունը սկսվում է տարրական դասարանների աշակերտներից մեկի գլխատված դիակի վրա հայտնաբերված երկտողի քննությամբ. «Բո-որի՛ն: Խաղը սկսվում է... Դե փորձեք կանգնեցնել ինձ, ես իրոք սիրում եմ սպանել»¹⁷: Այս երկտողը մասնակիորեն պատասխան է տալիս 1997 թըվականից ի վեր հնչող այն հարցին, թե ինչպես կարող էր սովորական ճապոնական ընտանիքի երեխան կատարել այս սպանությունները: Երկտողը մատնանշում է «Երեխայի» զարգացման «տեղաշարժված ժամանակը», նա ողբում է իր մանկության «հափշտակումը», «խլումը»՝ երդվելով վրեժ լուծել դրա համար: Ինչպես այս խնդրի ուսումնասիրողներն են ընդգծում, այստեղ հատկապես կարևոր է «Բացակա», «կտրված», «խլված» ու «հափշտակված» այն ժամանակը, որը Կոբեից այս երեխան ակնհայտորեն չի ապրել ազգային-պատմական հիմնախնդրի ավելի լայն ոլորտում: Այստեղ կարիք կա որոշակի պայմանների ու միջավայրի մեջ տեղավորելու ուսումնասիրողների կողմից նշվող «Թափանցիկ գոյություն» ֆրազը՝ հաշվի առնելով «խախտված ու անդամատված անհատականությունը», որն ունեցել է Կոբեից այս երեխան և «գոյության անտանելի թեթևամտությունը», ինչը նա «ողբերգականորեն ջանում է հաղթահարել՝ ապաստան որոնելով բնության մեջ»¹⁸:

Հուշագրության վերոհիշյալ գրքում շարունակական են այս ընտանիքի անցյալի փակ հարաբերությունների լուսաբանումն այն հույսով, որ գուցե ծնողները կարողանան հայտնաբերել անողորմ սպանությունների կանխագուշակման նշաններ: «Զոջումի հուշերում» կենտրոնականը սեփական երեխայի, իրենց աշխարհի բերած ու իրենց այդքան ծանոթ երեխայի ճանաչման ձգտումն է, երեխա, որին ճանաչելը դարձել է այդքան տան-

¹⁶ Andrea G. Arai, նշվ. աշխ., էջ 845:

¹⁷ Հիմնական փաստերից մեկը, որի վրա կենտրոնացավ այս սպանության հասարակական քննարկումը, երկտողում արտահայտված «սպանելու հաճույքն» էր: «Երեխան», որը ներկայացնում է կյանքը և վերածնունդը, այստեղ բնութագրվում է «մահը տեսնելու» և «սպանելու» ցանկությամբ:

¹⁸ Տե՛ս Yumiko I., *Between the Technique of Living an Endless Routine and the Madness of Absolute Degree Zero: Japanese Identity and the Crisis of Modernity in the 1990s*, London, 2000, էջ 423-464. Yoneyama S., *The Japanese High School: Silence and Resistance*, London, 1999:

ջալից: «Այժմ ես զգում եմ,- գրում է մայրը,- որ այս երեխայի իսկական ես-ը, այն, թե ինչ է տեղի ունենում այս երեխայի հոգու խորքում, ճանաչելու իմ ունակությունն ամբողջովին վերացել է»¹⁹: «Ժամանակների տեղաշարժ», «տեղախախտում», «տարատեղում» կամ «տեղերի փոփոխություն» է տեղի ունեցել, որը ծնում է ճանաչողության անորոշություն: Ո՞վ է նա, որին մենք փորձում ենք ճանաչել, իսկ ճանաչողությունն էլ ստեղծում է «երեխայի» չափահաս ու հասուն լինելու զգացողություն:

Ինչպես նշում է Ա. Գ. Արայը, այստեղ նկատելի է ուժեղ նմանություն ճապոնացի նշանավոր գրող Նացումե Սոսեկիի (1867-1916) XX դ. առաջին կամ Մեյձի դարաշրջանի (1868-1912) վերջին տասնամյակում գրված «Երազի տասը գիշերներ» գրքի երրորդ գիշերվա տեսիլքների հետ: Յուրաքանչյուր գիշեր բովանդակում է մեկ երազ, որը ժամանակակից աշխարհի հետ կապված Սոսեկիի մտահոգությունների ու խորհրդածությունների մի շարք է: Երրորդ գիշերվա երազում «հայրն» իր թիկունքին կապած տանում է ինչ-որ բան, որը, ըստ մեզ՝ «երեխա» է: Նրանք քայլելով առաջանում են, և «հայրը» հանկարծ հայտնաբերում է, որ ինքը չգիտի՝ ինչու է այս վայրերում, ուր է գնում և, որ ամենավատն է, չգիտի՝ ինչ է տանում թիկունքին: Երբ նրանք ավելի ու ավելի են առաջանում «հորն» անհայտ ուղիով, հայտնաբերվում է, որ «երեխան» ոչ թե ճանաչողության օբյեկտ է, այլ ճանաչող սուբյեկտ: Ճանաչողի դիրքի ու տեղի այս փոփոխությունն այն աստիճան կատարյալ անորոշության է վերածում «մեծահասակի» ու «երեխայի» գտնվելու թվացյալ կայուն տեղերը, որ «հայրն» այլևս չի իմանում, թե ինչ է ինքը կրում թիկունքին, և այն դառնում է ծանր քար²⁰:

Ինչո՞ւ են XX դ. առաջին տասնամյակում «երեխայի» գաղափարը և ժամանակի մեջ «երեխայի» ու «հոր» փոխադարձ դիրքերն այդքան մտահոգում Սոսեկիին: «Մակակիբարա Մեիտո... հոր և մոր զոջումի հուշագրությունում» մայրն ընդգծում է այն իրողության գիտակցման սարսափը, որ ինքն ինչ-որ ձևով աշխարհ է բերել մի էակ, որին այլևս չի ճանաչում... «Բայց այն երեխան, որին ես գիտեի, ես կարծում եմ չափազանց սիրում էի նրան, չէր թաքցնում իր զգացմունքները և բարի էր... Նա, որի կերպարը հառնում է թերթերից, մեր այն որդին չէ, որի մասին ամբողջ ժամանակ մենք ունեցել ենք մեր պատկերացումները: Այստեղ նա կապվում է կատուների սպանդի պատմությունների ու իր դպրոցական ընկերների հանդեպ բռնությունների հետ, որոնց մասին այս երեխան երբեք չի խոսել մեզ հետ: Այն ամենը, ինչի մասին նա խոսել է, միանգամայն տարբեր է: Նա ճանաչում էր մեզ, մենք էլ կարծել ենք, որ գիտենք նրան, բայց ես կարծում եմ, որ այս երեխան մեզ մոլորեցրել է: Այս երեխան մեր աչքի առաջ է եղել ամբողջ ժամանակ, մի թե մենք այդ աստիճան հիմարացված ենք եղել: Մի թե կարող է այդ տարիքի երեխան այդքան կատարելապես մոլորեցնել ծնողներին»²¹:

¹⁹ Մեջբերումը՝ ըստ **Andrea G. Arai**-ի նշվ. աշխ., էջ 850:

²⁰ Նույն տեղում, էջ 851:

²¹ Նույն տեղում, էջ 851-852:

Մոր կողմից ճանաչողության պակասի այս ընդունումն ուղեկցվում է ինքնախոստովանությամբ, որ եթե ինքն անտեղյակ է, ապա ո՞վ կարող էր այդ մասին իմանալ: Այս սովորական ընտանիքում կատարվածի ըմբռնումն ու պատճառներն ընտանիքից դուրս են: Պատահածի պատճառը համայն Ճապոնիայի մեջ է:

Ծնողների իրենց վիճակի ու «երեխայի» հանկարծակի անըմբռնելիությունն առաջացնում է նրա «հրեշայնացման» միտում: 1997 թ. հետո Ճապոնիայում, կապված «երեխայի» հետ, առաջ եկան տարբեր վախեր ու սարսափներ, և գուգահեռներ անցկացվեցին «տան ու ընտանիքի ինտեգրացիայի անկման» քննախոսության հետ: Այս ամբողջ քննարկումը «երեխային» պատկերում է որպես մի օբյեկտ, որից պետք է վախենալ, հիմնավորվում է այն գաղափարը, որ «երեխան» ոչ միայն օբյեկտ է, որը կարիք ունի պաշտպանության, այլ նաև օբյեկտ, որից պետք է վախենալ ու պաշտպանվել:

Ջեյմս Սիգելը՝ «Նոր հանցագործ տիպ Ջակարտայում» աշխատության հեղինակը, Ջակարտայում երեխաների հանցագործությունների մասին գրում է, որ «երեխայի» «հրեշայնացումը» դառնում է ինտենսիվ սոցիալական սարսափի աղբյուր, բայց «անհնար է դարձնում ուշադրության կենտրոնացումը սոցիալական պայմանների վրա»²²: Սիգելը պնդում է, որ երեխաների կատարած հանցագործությունների հաղորդագրություններում բացակայում են այն կատեգորիաները, որոնց օգնությամբ պատկերվում են այս հանցագործությունները: Քրեական իրավունքի մեջ ևս դժբանք բացակայում են: Այն երեխաները, որոնք մեծահասակների նման հանցագործություններ են կատարում, անըմբռնելի են, և գիտելիքի այդ պակասը հանգեցնում է հրեշայնության զգացումի ծննդի²³: Չանգվածային տեղեկատվության միջոցներով այն հանցագործ երեխաների վերաբերյալ քննարկումներում, որոնք կողոպտում և սպանում են մեկ այլ երեխայի, ըստ Սիգելի, բացահայտվում է, թե որքան ապակայունացնող կարող է լինել «մեծահասակ-երեխա» կապը և ինչպես կարող է անդրադառնալ «նատուրալիզացված» (քաղաքացիություն ձեռք բերած) արժեքների ապակայունացման վրա: Վերջինս էլ իր հերթին «հավասարակշռությունից հանում է սոցիալական կյանքի նատուրալիզացված կատեգորիաները»:

Հիրոտա Տերույուկին, որը կրթության սոցիոլոգ է, ընդգծում է, որ Ճապոնիայում դժվարացել է երեխաների տնային դաստիարակությունը²⁴, և դա է հանցագործ երիտասարդության թվի մեծացման հիմնական պատ-

²² Siegel J., *A New Criminal Type in Jakarta*, Durham, NC, 1998, p. 71-72.

²³ Նույն տեղում, էջ 72:

²⁴ Ուենո Չիզուկոն կարծում է, որ տան ու ընտանիքի ճապոնական պատկերը հիմնվում է ճապոնացի մոր «ինքնագոհողության» գաղափարի վրա, մի գաղափար, որը ներկայումս կործանման եզրին է: Համբերատարության այս գաղափարի ու XXI դարի սկզբի սոցիալական իրողությունների ավելի ու ավելի օտարումը հասցրել է նրան, որ երիտասարդ մայրը ընտանիքի, տան ու երեխայի խնամքի խնդիրներում հայտնվել է սպառողական կողմնորոշում ունեցող հասարակության ամենահակասական ու իրարամերժ պատկերացումների ազդեցության ներքո (մանրամասն տե՛ս Ueno Chizuko. *Collapse of Japanese Mothers*, *US-Japan Women's Journal (English supplement)*, 1996, N 10, էջ 3-19):

ճառը: Հիրոտայի եզրահանգումն ունեցավ համարյա թե հիստերիկ արձագանք: Չնայած ընտանեկան դաստիարակության անկման առնչությամբ պատմական հակափաստերին՝ ըստ 1999 թ. Տոկիոյում լույս տեսած Հիրոտայի գրքի՝ այս իրադարձությունն արդյունք է «մի շատ լուրջ հիմնախնդրի»: Իր գրքում նա ինքնավստահ քննադատության է ենթարկում «անցյալի հանդեպ կարոտաբաղձության դաստիարակումն ու անցյալի գեղեցկացումը»²⁵, ինչով ներթափանցված են «երեխայի» ու ընտանիքի արդի վերլուծումները Ճապոնիայում, և որն էլ գերծ է պահում ներկայիս կոնֆլիկտների մատնանշումից:

Մյուս կողմից՝ Կավակամի Բիոիչին իր «Դպրոցի կործանումը» գրքում գոյություն ունեցող ճգնաժամը համարում է «շատ վաղուց կանխորոշված»: Նա գրում է, որ 14-ամյա պատանու կատարած լուրջ հանցագործությունները ծնողներին վերջապես ստիպեցին անդրադառնալ սոցիալական ինտեգրացիայի այն անկմանը, որը կա և՛ «երեխայի» մեջ, և՛ դպրոցում: Կավակամի Բիոիչին 1997-2002 թթ. լայնորեն հայտնի «Երեխան տարօրինակ է դառնում» խոսքի առաջին հեղինակներից մեկն է և պնդում է, որ Կոբեի իրադարձություններից հետո այլևս հնարավոր չէ մեղքն ամբողջությամբ բարդել դպրոցի վրա, և ծնողները պետք է նայեն իրենք իրենց²⁶: «Այս իրադարձությունից հետո, - գրում է նա, - ընդհանրապես հնարավոր չի լինի, որ այն ծնողները, որոնք նույնիսկ փոքր-ինչ մտածել են այդ մասին, չունենան մտավախության ուժեղ զգացում՝ կապված նրա հետ, թե ինչ են մտածում իրենց երեխաները, և թե ինչ կարող են նրանք անել»²⁷:

Տարրական դասարանների աշակերտների սպանությունների շուրջ քննարկումների ամենակարևոր արդյունքներից մեկը ճգնաժամի համակողմանիության գիտակցումն էր: Հիրոտան մատնանշում է ընտանիքը, իսկ Կավակամին՝ դպրոցը, և ամենևին էլ պարզ զուգատիպություն չէ, որ դեռևս հետպատերազմյան դարաշրջանում «ազգային զարգացման» հետ «երեխայի» փոխհարաբերության մասին գիտելիքները Ճապոնիայում ձևավորվեցին որպես հատուկ դասի գիտելիքներ: Այդ տարիներին «երեխայի» անհատականությունը և տարիքային առանձնահատկությունը ճնշվեցին և փոխարինվեցին Ճապոնիայի զարգացման գաղափարով: Այս միտումը հայտնաբերվում է հետպատերազմյան տարիներին ընթացող «մշակույթի» քննարկումներում, որտեղ «երեխան» կապվում է Ճապոնական մշակույթի և Ճապոնիայի հետ:

Հետպատերազմյան տարիների քննարկումներում «մշակույթ-անձ-երեխա» վերլուծությունների հիմնական արդյունքներից մեկը եղել է ժամա-

²⁵ Մեջբերումը՝ ըստ **Andrea G. Arai**-ի նշվ. աշխ., էջ 859:

²⁶ «Երեխան տարօրինակ է դառնում» (*“the child is turning strange”*) խոսքը հանրահայտ դարձավ՝ շնորհիվ 1991-1995 թթ. լույս տեսած Ճապոնական մի հրատարակության (*Bassatsu Takarajima*): Այս հրատարակության թիվ 129-ը հենց այդպես էլ վերնագրված էր. «Երեխան տարօրինակ է դառնում»: Հրատարակության այս համարի երեսին պատկերված է դասարանում նստած մի աշակերտ, որի մարմինը վերափոխվում է փոքր, կանաչ, մոդեռն հիշեցնող հրեշի: Նա դեռևս իր ձեռքում պահում է գրիչը, բայց ավարտում է իր հրեշային փոխակերպումը:

²⁷ Մեջբերումը՝ ըստ **Andrea G. Arai**-ի նշվ. աշխ., էջ 847:

նակակից Ճապոնիայում «մանկության ինստրումենտալության» բացահայտումը: Ջարգացնելով իր տեսակետը ճապոնացի երեխաների մտավոր ու ֆիզիկական առողջության վրա շուրջօրյա լարված ուսուցման վրտանգավոր ազդեցության մասին՝ Ն. Ֆիլդը նշում է «ճապոնական մշակութային տրամաբանության կոմպլեքս բացը, որը ճապոնացի երեխաներին թողել է ծանր աշխատանքի ու պատասխանատվության այս համակարգում»: Ըստ Ֆիլդի՝ 1990-ականների «սոցիալապես սահմանված խնդիրների» կատարման հետևանքով ճապոնացի երեխաներն ավելի ու ավելի վաղ տարիքում դարձան աշխատանքի ու սպառման օբյեկտ²⁸: Հատկապես Ճապոնիայի տնտեսական գերտերություն դառնալու հետպատերազմյան դարաշրջանում, երբ, ըստ Ֆիլդի, երեխաները վերածվեցին «սոցիալապես սահմանված խնդիրների» կատարողների, «երեխան» և «մանկությունը» դարձան ազգային ներդրումների ոլորտ, որտեղ արտահայտվում են ազգային ապագայի հետ կապված մտահոգությունները: Այստեղ արտահայտվում են նաև անձնական ապագայի հետ կապված այն տագնապները, որոնք առնչվում են անձնական սոցիալական ստատուսին ու ֆինանսական ապահովությանը: Ծանր աշխատանքի ու պատասխանատվության այս համակարգի հիմնական դրսևորումներից մեկը ճապոնական հետոպրոցական ուսուցման ինդուստրիան է կամ ընդունելության քննություններին նախապատրաստվելը ճապոնական համակարգը²⁹:

1997 թ. Կոբեի սպանությունները և Սակակիբարա Սեիտոյի կերպարն այս ամենն ի հայտ բերեցին: Այս իրադարձության ծավալուն և շարունակական մեկնաբանությունը պատահածի պատճառների օբյեկտիվ որոնում է: Ու այս ամենի մեջ այն երեխան, որը հայտնի դարձավ որպես Սակակիբարա Սեիտո, բացակայում է, և որոնումն ուղղված է սոցիալական երևույթի ու հավաքական կերպարի ծագման և զարգացման վերլուծությանը:

«Հոր և մոր զոջումի հուշապատումը» դարձավ բեստսելլեր, իր հրատարակման օրվանից մի փոքր անց վաճառվեց այդ գրքի ավելի քան 350,000 օրինակ: Գրքի մեծաքանակ վաճառքը Ճապոնիայում անդառնալիորեն ժողովրդականացրեց ցավալի մի նախադասություն. «Մենք ինչ կարող ենք անել, եթե այսպիսի երեխա ենք մեծացրել»:

Սակակիբարա Սեիտոյի կերպարը սուր հակասության մեջ է մանկության այն պատկերի հետ, որը ներկայացված է Միաձակիի «Իշխանուհի Մոնոնոկեում»: Նա ամբողջությամբ կապված է Ճապոնիայի անդառնալի

²⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս **Field N.**, *The Child As Laborer and Consumer: The Disappearance of Childhood in Contemporary Japan*, in: *Children and the Politics of Culture* (ed. Sharon Stephens), Princeton, 1995:

²⁹ Չնայած հետոպրոցական ուսուցման համակարգի նպատակն է դիմորդներին նախապատրաստել ընդունելության քննություններին, բայց գոյություն ունի հետոպրոցական պարապմունքների մեծ բազմազանություն: Այսուհանդերձ, հետոպրոցական ուսուցման համակարգ ասելով՝ գլխավորապես նկատի է առնվում ակադեմիական կողմնորոշում ունեցող թեստերին վարժեցումը, որի նպատակը հատկապես ընդունելության քննություններին նախապատրաստումն է:

կորստի հետ: Իսկ «Իշխանուհի Մոնոնոկեն» առողջ մանկության խորհրդանիշ է, այն պատկերում է հեռու-հեռու ժամանակներում գոյություն ունեցած բնությունը, նրա աշխարհի բերած երեխային՝ անխռով մթնոլորտի մեջ: Հակառակ այս ամենի՝ «Սակակիբարա Սեիտո» երևույթի ճանաչման դժվարությունը հիմք է դառնում «հրեշայնացման» համար: Այս անհայտությունը ճապոնիայում առաջացրեց սոցիալական զարգացման ուրվագծման անկարողության զգացում, հասարակության երևույթների ճանաչման անկարողություն, մի զգացում, որ ճապոնիայի արդիականացման դարաշրջանում դաստիարակությունն ու հասունացումը շեղված ուղիով են ընթացել: Ու հակառակ դրան՝ ձևավորվեց այն պատկերացումը, որ Միաձակիի «Իշխանուհի Մոնոնոկեի» կամ Ռ. Կիպլինգի «Մաուգլիի» բնությունն ընթացել է ճիշտ ուղիով: Իսկ այստեղ ճապոնական մոդեռնիզմի ճգնաժամի ու «երեխայի» զարգացման քննախոսությունը հանդես եկավ որպես «ազգ-բնություն-մշակույթ-արդի ճապոնիա» փոխհարաբերություն, որի մեջ Սակակիբարա Սեիտոն և Միաձակիի «Իշխանուհի Մոնոնոկեի» Սանն արտահայտում են ավելի հիմնարար հարցադրում՝ «երեխայի» կերպարը վերցված «իր նախասկզբնական ձևի» ու «մոդեռնության» ենթատեքստում:

1997 թ. Կոբեի իրադարձությունները շրջադարձ էին «երեխայի» մասին քննախոսության մեջ: Ակնհայտ դարձավ, որ «երեխայի» շուրջ քննարկումներում տեղի է ունեցել որակական փոփոխություն: 1990-ականի սկզբին դրանք ուղղված էին «երեխայի» հիմնախնդիրների նկարագրությանը դպրոցում և ընտանիքում: Բայց Կոբեի սպանություններից հետո քննարկումն ուղղվեց դեպի նրա բացահայտմանն ու վերլուծությանը, ինչն անտեսանելի ու անհայտ էր: «Երեխայի» այս անհայտ ու անիմա-նալի առնչությունները կապվեցին նրա հասունացման ու դաստիարակության հետ:

Երկար սպասված 2000 թվականը ճապոնիայում նշանավորվեց «երեխայի» ու նրա դաստիարակության հետ կապված մտավախություններով ու վարանումներով: Գրքերի, հոդվածների, կինոնկարների վիթխարի հոսանքը լուսաբանում է «մանկության» ու «երեխայի» հիմնախնդիրը, որի հոգեկանն ու մարմինը համարվում են վտանգված: Մասնագիտական հրատարակություններում դա ձևակերպվում է որպես «երեխայի զարգացման կամ ընտանիքի, երեխայի ու դաստիարակության ինտեգրացիայի կորուստ»: Այս լուրջ բացթողումը վերացնելու համար ընթացքի մեջ են նոր ծրագրեր, այդ թվում՝ «Պատանեկության մասին օրենքը», «Երեխաներին չարաշահումից պաշտպանելու նոր օրենքը», երեխայի կրթության ու տնային դաստիարակության նոր ուղեցույցների հաստատումը, կրթության նոր դիրեկտիվները, որոնք խրախուսում են «նվազ մրցակցությունը» և բավարարում «հոգու կրթության» պահանջները³⁰: Այս փոփոխություն-

³⁰ «Մրցակցության դարաշրջանի ավարտը» ճապոնիայի կրթության նախարարության բարեփոխումների հիմնական դրույթներից է, որը պաշտոնապես գործողության մեջ է մտել 2002-2003 թթ.: Բարեփոխումները նախատեսում են ուսումնական ծրագրերի նշանակալից կրճատում և դասաժամերի նվազեցում: Այն հարցին՝ արդյո՞ք առաջարկվող փոփոխություններն ի վիճակի են լուծել այն խնդիրները, որոնք առաջացել են ճապոնական դպրոցում, մասնագետները պատասխանում են կասկածանքով: Մինևույն ժամանակ, նախկին վարչապետ Յոսիիո Մորիի (2000-2001) այն առաջարկը, որ արդի ճգնաժամի հաղթահարումը պահանջում է ավելի խիստ կարգուկանոն և բարոյականության ուսուցանում, ևս մնում է ուժի մեջ:

ների հետ անմիջականորեն կապված է անհատական հոգեբանության և ազգի ավելի լայն կոլեկտիվ հոգեբանության փոխհարաբերությունների քննարկումը:

Ներկա պահին «Երեխայի» ու «մանկության» շուրջ անհանգստությունը մտնում է իր զարգացման մեկ այլ փուլ՝ առանց ժխտելու առկա ճրգնաժամի գոյությունը: Ինչպե՞ս են XXI դարում «Երեխան» ու «մանկությունն» առնչվելու ճապոնական ազգի ու հասարակության նոր սոցիալ-տնտեսական իրողությունների ու ճապոնական պատմության հետ: Ինչպիսի՞ն է լինելու «Երեխայի» զարգացման ու ինտեգրացիայի կորստի» քննարկումը սոցիալական նոր տեղաշարժերի պայմաններում: Սրանք են այն հարցադրումները, որոնք ձևակերպվում են «Երեխայի» շուրջ քննախոսության ներկա փուլում:

КРИЗИС ЯПОНСКОГО МОДЕРНИЗМА И ОБСУЖДЕНИЕ “ПРОБЛЕМЫ ДЕТЕЙ” В КОНЦЕ 1990-Х ГОДОВ

ГИШАН Б. Ж.

Резюме

В конце 1990-х годов в академических кругах Японии широко обсуждались проблемы детства, воспитания и начального образования в современном обществе. Эти дискуссии свидетельствовали о кризисе доверия в японском обществе после убийства нескольких японских подростков 14-летним школьником в г. Кобе в 1997 году. Развернувшийся дискурс о детстве был основан на западных теориях, в частности, на теории послевоенной модернизации японского общества, а также теории, выдвинутой американской антропологической школой Ф. Боасса и его последователей, изучающих национальную идентичность японцев. Проблемы детства, напрямую связанные с социально-экономическим развитием Японии, остаются в центре внимания специалистов, ибо они раскрывают истоки морального и культурного кризиса Японии XXI в.